ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.06.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/240

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Առնատար» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Հ. Օհանյանի (լիազորագիր՝ տրված 06.06.2022թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8877-2022 գրությամբ «Առնատար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.05.2022թ. թիվ 39/02-15-332

գրության հիման վրա, 17.05.2022թ. թիվ 26/26-1/8877-2022 գրությամբ նախաձեռնել է «Առնատար» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Առնատար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Առնատար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ (այսուհետ՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Առնատար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-ՆԳ-2022/240 ծածկագրով ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 06.05.2022թ-ի թիվ 39/02-15-332 գրությունը և կից նյութեր (այսուհետ՝ Գրավոր հիմքեր):

1. Գործի նախապատմությունը և էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Ընկերությունը մասնակցել է 28. 02. 2022թ. -ին Պատվիրատուի կողմից հրապարակված թիվ ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ Մրցույթ), որի հակադարձ աճուրդը ամփոփվել է 10. 03. 2022թ. -ին: Մրցույթի արդյունքում որոշ չափաբաժինների մասով Ընկերությունը ճանաչվել է հաղթող մասնակից: Ինչի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի արձանագրությունը կազմվել է 07. 04. 2022թ. -ին և այդ օրվան հաջորդող օրը հրապարակվել է տեղեկագրում, այսինքն՝ Պատվիրատուն գնման ընթացակարգի գնահատման գործընթացը իրականացրել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 21-րդ ենթակետի և Մրցույթի հրավերի 8. 9 կետի խախտմամբ, այն է՝ մասնակիցների հայտերի գնահատումը տաս աշխատանքային օրվա փոխարեն իրականացրել է 21 աշխատանքային օրվա ընթացքում: Իսկ պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշումը տեղեկագրում հրապարակել է 07. 04. 2022թ. -ին, որով անգործության ժամկետը սահմանվել է 10

օրացույցային օր, այն է մինչև 17. 04. 2022թ. -ը ներառյալ: Հաշվի առնելով, որ 17. 04. 2022թ. ոչ աշխատաքնային էր անգործության ժամկետը ավարտվել է 18. 04. 2022թ. -ին, որին հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացում Պատվիրատուն պետք է Ընկերությանը ուղարկեր պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, ինչը սահմանված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածի 2-րդ մասով: Սակայն, ինչպես նշված է Գրավոր հիմքերում՝ Պատվիրատուն պայմանագրի նախագիծը Ընկերությանը ուղարկել է անգործությունը ավարտվելու օրը 18. 04. 2022թ. , այսինքն Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի խախտմամբ: Այդ օրվանից հաշված պայմանագիրը կնքելու համար նախատեսված 10 աշխատանքային օրը ավարտվում էր 02. 05. 2022թ. -ին:

Այսպիոսով՝ վերագրյալից կարող ենք փաստել, որ Պատվիրատուն օրանեքով իր վրա դրված պարտականությունները կատարել է կետանցով (ոչ պատշաճ), այն է՝ պայմանագիր կնքելու առաջարկը Ընկերությանը ուղարկել է օրենքով սահմանված ժամկետից 11 աշխատանքային օր ուշ, քանի որ ինչպես նշվեց՝ գնման ընթացակարգի գնահատումը 10 շխատանքային օրվա փոխարեն իրականացվել է 21 աշխատանքային օրվա ընթացքում: ՈՒստի նշյալից հետևում է, որ Պատվիրատուն օրենքով իր վրա դրված պարտականությունները կատարել է կետանցով (ոչ պատշաճ) և գնման գործընթացը իրականացրել է օրենքի խախտմամբ, ինչի արդյունքում Ընկերությանը Պայմանագրի նախագիծը ուղարկվել է ավելի ուշ քան նախատեսված է օրենքով: Նշված հանգամանքի պատճառով է, որ Ընկերությունը բաց է թողել պայմանագիրը կնքելու համար օրենքով տրված տաս աշխատանքային օրը, քանի որ մենք նախատեսում էինք, որ պայմանագրի ծանուցումը մեզ պետք է ուղարկվի օրենքով սահմանված ժամանակահատվածում և այդ ժամանակահատվածում է, որ հետևում էինք մեր էլեկտրոնային փոստին որպեսզի բաց չթողնենք պայմանագիրը կնքելու առաջարկը, մինչդեռ Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների և անգործության պատճառով պայմանագրի ծանուցումը ուղարկվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ և անկախ մեր կամքից մենք չենք նկատել ծանուցումը և բաց ենք թողել պայմանագիրը կնքելու համար նախատեսված տաս աշխատանքային օրը:

2. Դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

2.1. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են

օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

Օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, (...):

Օրենսգքրի 352-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ 1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 421-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա

դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը:

Օրենսգրքի 421-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե պարտապանի կետանցի հետևանքով կատարումը պարտատիրոջ համար կորցրել է իր հետաքրքրությունը, ապա նա կարող է հրաժարվել կատարումն ընդունելուց և պահանջել հատուցելու վնասները:

Օրենսգրքի 422-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պարտատերը կետանցող է համարվում, եթե (...) չի կատարել օրենքով, այլ իրավական ակտերով (...) սահմանված կամ (...) գործողություններ, որոնք չկատարելու դեպքում պարտապանը չէր կարող կատարել իր պարտավորությունը:

- Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից պատվիրատուն օրենքով իր վրա դրված պարտականությունը կատարել է կետանցով՝ (անպատշաճ), այն է՝ պայմանագիրը ուղարկել է սահմանված ժամկետից 11 աշխատանքային օր ուշացումով: Մինչդեռ գնման գործընթացի իրականացման համար Օրենքով և Կարգով սահմանված են հստակ ժամկետներ և ընթացակարգ, որոնք անհրաժեշտ է պահպանել, սակայն Պատվիրատուն դրանք անտեսելով դրսևորել է կամայականություն և գնման գործընթացն իրականացրել է խախտումներով:

Նշենք, որ Օրենքով և Կարգով գնման գործընթացի տարբեր փուլերի իրականացման համար ժամկետներ նախատեսելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը և հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության միջոց:

Այսպիսով՝ ինչպես արդեն նշել էինք վերագրյալով Պատվիրատուն օրենքով իր վրա դրված պարտականությունները կատարել է կետանցով (ոչ պատշաճ) և գնման գործընթացը իրականացրել է օրենքի խախտմամբ, ինչի արդյունքում Ընկերությանը Պայմանագրի նախագիծը ուղարկվել է ավելի ուշ քան նախատեսված է օրենքով: Նշված հանգամանքի պատճառով է, որ Ընկերությունը բաց է թողել պայմանագիրը կնքելու համար օրենքով տրված տաս աշխատանքային օրը, քանի որ մենք նախատեսում էինք, որ պայմանագրի ծանուցումը մեզ ուղարկվելու է օրենքով սահմանված ժամանակահատվածում և այդ ժամանակահատվածում է, որ հետևում էինք մեր էլեկտրոնային փոստին որպեսզի բաց չթողնենք պայմանագիրը կնքելու առաջարկը,

մինչդեռ Պատվիրատուի ոչ իրավաչափ գործողությունների և անգործության պատճառով պայմանագրի ծանուցումը ուղարկվել է օրենքով սահմանված ժամկետից ուշ և անկախ մեր կամքից մենք չենք նկատել ծանուցումը և բաց ենք թողել պայմանագիրը կնքելու համար նախատեսված տաս աշխատանքային օրը: Ուստի սույն իրավիճակը՝ Ընկերությանը Ցուցակում ներառելու ընթացակարգը առաջացել է ոչ թե Ընկերության մեղքով այլ Պատվիրատուի կողմից իր վրա օրենքով դրված պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով, հետևաբար սույն իրավիճակի համար պատասխանատվությունը պետք է կրի ոչ թե Ընկերությունը, այլ Պատվիրատուն, քանի որ ինչպես սահմանված է Կարգի 2-րդ կետում՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատվիրատուների համար սահմանված պահանջների կատարման պատասխանատվությունը կրում է պատվիրատուն:

Ուստի կարծում ենք, որ վերոնշյալով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Ընկերությանը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Պահանջը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 50-րդ հոդվածով և ՀՀ ֆինանսների նախարարի 06. 12. 2018թ. -ի թիվ 600-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 19-րդ կետով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

խնդրում ենք՝

ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Առնատար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-ՆԳ-2022/240 ծածկագրով ընթացակարգը»:

«Առնատար» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/240 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը: Ներկայացուցիչը ներկայացել է 16.06.2022թ. ժամը 10:03-ին հրավիրված նիստին:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.05.2022թ. թիվ 39/02-15-332 գրությամբ, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք, որ 2022թ.-ի ապրիլի 28-ին հայտարարված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի կարիքների համար գրասենյակային կահույքիձեռքբերման ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում 2-րդ չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել «ԱՌՆԱՏԱՐ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01318978, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Լուկաշինի 1 փ.9/1, Հեռ.՝ +37494054505, էլ. հասցե՝ arnatar2022@mail.ru):

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից անգործության ժամկետը լրանալուն հաջորդող 1-ին աշխատանքային օրը՝ 18.04.2022թ.-ին, «ԱՌՆԱՏԱՐ» ՍՊԸ-ին eauction համակարգի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում (ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում) վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ Պատվիրատուին չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հանձնաժողովը արձանագրեց, որ սահմանված ժամկետում «ԱՌՆԱՏԱՐ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրի և որակավորման ապահովումները փաստաթղթային եղանակով՝ ուղեկցող գրությամբ չեն ներկայացվել Պատվիրատուին:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները՝ գնահատող հանձնաժողովը «ԱՌՆԱՏԱՐ» ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափպբաժնի մասով մերժել է:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ «ԱՌՆԱՏԱՐ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում ենք Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում:»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/240 ընթացակարգի շրջանակներում 08.06.2022թ. ժամը 11:05-ին և 16.06.2022թ. ժամը 10:03-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/240 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/240 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Առնատար» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.procurement.am պաշտոնական կայքում 28.02.2022թ.-ին, որով սահմանվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, հայտարարության հրապարակման օրվանից հաշված 9-րդ օրը ժամը 10:00-ին՝ 09.03.2022թ.:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Առնատար» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:
4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 18.04.2022թ. eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է «Առնատար» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:
5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Առնատար» ՍՊԸ-ին eauction.armeps.am համակարգի միջոցով 18.04.2022թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը և որակավորման ու պայմանագրի ապահովումները և որոշում կայացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8877-2022 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 06.05.2022թ. թիվ 39/02-15-332 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Որակավորման ապահովում չի ներկայացվում, եթե ընտրված մասնակիցը կամ տվյալ ընթացակարգի շրջանակում վերջինիս կողմից՝ որպես պաշտոնական ներկայացուցիչ, մատակարարվող ապրանքներն արտադրող կազմակերպությունը, հայտերը բացելու օրվա դրությամբ ունի միջազգային հեղինակավոր կազմակերպությունների (Fitch, Moodys, Standard & Poor՝s) կողմից շնորհված վարկունակության վարկանիշ առնվազն Հայաստանի Հանրապետությանը շնորհված սուվերեն վարկանիշի չափով: Եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը՝

- չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի

տասնհինգ, իսկ գերազանցելու դեպքում՝ երեսուն տոկոսին.

- չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով, բացառությամբ շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության և տեխնիկական հսկողության ծառայությունների գնումների, որոնց դեպքում ապահովումը ներկայացվում է սույն պարբերությամբ նախատեսված երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով.

- գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, որակավորման ապահովումը ներկայացվում է բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***<u>ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:</u>***

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՄ-ԷԱՃԱՊՁԲ-22/33» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Առնատար» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել «Առնատար» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 18.04.2022թ. eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է «Առնատար» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.05.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Առնատար» ՍՊԸ-ին eauction.armeps.am համակարգի միջոցով 18.04.2022թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը և որակավորման ու պայմանագրի ապահովումները և որոշում կայացրել «Գնումների մասին»

ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 9-րդ կետի 9.1 և 9.3 ենթակետերի համաձայն՝

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

<u>9.3 Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u> Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

(...)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսինքն՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում են հստակ ժամկետներ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք

համադրելով գործում առկա փաստական հանգամանքների հետ՝ գտնում եմ, որ «Առնատար» ՍՊԸ-ն ըստ էության հրաժարվել է պայմանագիրը կնքելուց և թույլ տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև պայմանագրի ու որակավորման ապահովումները:

Ինչ վերաբերում է ՍՑ-ՆԳ-2022/240 ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմանը, ապա հարկ եմ համարում հայտնել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետի դրույթների խախտում, քանի որ հայտերի գնահատումը պետք է իրականացվեր գնահատող հանձնաժողովի հրավիրված նիստը սկսելու օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում, այնինչ, սույն դեպքում, հանձնաժողովը հայտերի գնահատումն իրականացրել է հայտերը բացվելուց հետո 21 (քսանմեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ 07.04.2022թ.:

Այսպես, Ընթացակարգի հրավերը հրապարակվել է www.procurement.am պաշտոնական կայքում 28.02.2022թ.-ին, որով սահմանվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով, հայտարարության հրապարակման օրվանից հաշված 9-րդ օրը ժամը 10:00-ին՝ 09.03.2022թ.:

Այսինքն՝ 09.03.2022թ. հայտերը բացվելուց հաշված 10 (տասը) աշխատանքային օրը ավարտվում է 23.03.2022թ.:

Այսպիսով՝ ամբողջ վերոգրյալների հիման վրա, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թեև թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 8.9-րդ կետի դրույթների խախտում, սակայն այդ խախտումը չի կարող հանգեցնել «Առնատար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի մերժմանը, ինչպես նաև բացառել Ընկերության՝ պայմանագիր կնքելուց վերջինիս հրաժարման փաստը, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թույլ տված խախտման և Ընկերության կողմից պայմանագիր չկնքելու միջև պատճառահետևանքային կապ առկա չէ: Գործում առկա չէ որևիցե փաստական հանգամանք, որի հաշվառմամբ հնարավոր կլիներ փաստել, որ Ընկերության կողմից պայմանագիր չկնքելն ուղղակիորեն ու անմիջականորեն պայմանավորված է եղել հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ժամկետների խախտման փաստով:

Ընդ որում, հարկ եմ համարում նշել նաև, որ դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքները չեն հիմնավորվել՝ որևէ ապացույց ի հավաստումն հայտնածի չի ներկայացվել:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.05.2022թ. թիվ 26/26-1/8877-2022 գրությամբ «Առնատար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Առնատար» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**